

թեանը ուրախակից են եղել, միասին ասլրել, միասին մեռել են, սերտ կապուած են եղել նորա հետ, իրեւ հայր և որդի ապրել են, սիրել են և սիրվել, խրատել են և յանդիմանել, առանց աչաւութեան, և այսպէս վառ և լարուած են պահել ժողովրդեան մէջ հոգեռոր զգացմանց կրակը, նթէ նոքա այցելել են իրանց հօտին քաղաքից քաղաք և գիւղից զիւղ շրջելով, նոքա ամենուրեք երեացել են ոչ թէ իրբեւ միայն իշխանաւոր, այլ աւելի իրբեւ հայր սրտացաւ, բաւականավով ինչով բաւականանում էր ժողովուրդը, առնելով ուստի հնար էր և տալով ուր անհրաժեշտ էր: Այս են ցոյց տալիս մեզ մեր նուիրակների, մեր առաջնորդների ու վանահայրերի պատմութիւնքը, այնպիսեաց, որոնք շինողք եղած են:

Նոյն գիրքը բանելով այսօր հայ եկեղեցականը կարող է մեծամեծո գործել յօգուտ հայ եկեղեցեաց պայծառութեան և ժողովրդեան հոգեռոր երջանկութեան, ու նախնեաց յիշատակարանների պահպանութեան, որ վկայք են հայերի կրօնասիրութեան գարերի ընթացքում:

### Ա. ԷԶՄԻԱԺՆԻ ԳՐԸԴԸՐԸՆ

Էջմիածնի դրադարանի ամենանշանաւոր ձեռագիրներից մէկն է № 892ը, որ ձաշոց է Հեթում Պարոնին, ապա թագաւոր Հեթում երկրորդ անունով, որդի և ոն երրորդի: Հեթում երկրորդը թագաւորեց 1289 թուականին և մի քանի անգամ կրօնաւորեցաւ, հրաժարուելով աթոռից և կրկին թագաւորեց և մեռաւ թագաւորահայր տիտղոսը կրելով: Լստ կրօնաւորութեան Յովհաննէս անուանեցաւ:

Այս ընտիր ձեռագիրը բոլորագիր է և գրած է 1286 թուականին Քրիստոսի, ընտիր մագաղաթի վերայ: Գրքի երկայնութիւնն է 7½ վերշոկ, լայնութիւնը 6 վերշոկ և թանձրութիւնը 2 վերշոկ: Դիրքը բաղկանում է 940 մեծադիր երեսներից, բացի յիշատակարանից ունի 13 երես: Առաջին հինգ թերթերը ցանկ են և վեցերորդ թերթի վերայ զգեստաւորուած, ձեռքին մի գիրք բռնած նկարած է մի եկեղեցական: պատկերի տակ գրած է «Սուլք Սահակն է, թոռն սուլք Գրիգորոյ, գրոցս շի-

նողն, թուին Հայոց 21.Ե » (1288): Բոլոր գիրքը պատկերազարդ է և ծաղկազարդ: Ունի 9 մեծադիր պատկերներ ընտիր ներկերով նկարած և ոսկեզօծ, պատկերներն են 1) Քառասորեայ ընծայումն Փրկչի ի ծանարն 118 երորդ երեսում. 2) Մաղկազարդ, 274 երորդ երեսում. 3) Ոտնալուայի պատկեր, 334 երորդ երեսում. 4) Փրկչի խաչից իջեցնելու պատկերը 386 երորդ երեսում. 5) Յունան մարգարէի ծովը գձելու, կէտ ձըկնիդ կլանելու և ապա ցամաք գցուելու պատկերները 400 և 401 երեսներում: 6) Փարաւոնի ընկղմելը Կարմիր ծովում, Խորայելացւոց անցն և առանձին Մովսէսի և Ահարոնի պատկերները 404 երեսում. 7) Երից մանկանց Բաբիլոնի հնոց գցվելու պատկերը 417 երորդ երեսում. 8) Յարութեան պատկերը 424 երորդ երեսում: Հրեշտակը նոսած է վէմի վերայ. Երեք կանայք գալիս են գերեզման և Յիսուսին չեն գտնում. 9) Յիսուսը նստած է Սիմոնի տանը և մի կին լնկած է նորա ոտքերի առաջ 583 երորդ երեսում: Բացի սրանից լուսանցքներում կան բազմաթիւ փոքրիկ պատկերներ սրբոց և մարտիրոսաց, և սուրբ գրոց պատմութեանց վերաբերեալ, նոյնպէս և ծաղիկներ ու զարգեր: Բոլոր գլխատառերը ոսկեզօծ են և ընտիր գոյներով նկարած, ներկայացնելով կամ մարդիկ, կամ ցամաքային ու ծովային կենդանիք և կամ բոյսեր: Աւելի լնտիր են և նուրբ նկարած լուսանցքների փոքրիկ պատկերները, ափսոս որ խոնաւութիւնից և անխնամ պահպանելուց շատերը այդ պատկերներից փչացած են: Երիտասարդ նկարիչ Պ. Բերնշտամը այս ձեռագրի պատկերներից և զարդերից քսանի չափ նկարել է Ալբոմի համար: Խնչպէս երեւում է վերջին յաւելուած յիշատակարանից, այդ ձաշոցը մինչև էջմիածնայ սուրբ Աթոռը հասնելը շատերի ձեռքում եղել է. վասն զի յաւելուած յիշատակարանում կարդում ենք հետեւեալ տոզերը. «Վերստին նորոգեցւ գիրքս ի մայրաքաղաքն յԱտանայ ձեռամբ սուտ անուն Խոկենտէր գպրի, ի թուականիս մերում ՌՃԽԴ (1695 թ.) ի հայքապետութեան ծեառն ծէր Նարին Աստուածատուր Կաթողիկոսի տանն Կիլիկիոյ, յունիս ամսոյ թ. (9ին) ի խնդրոյ բարեսէր և բարեմիտ Աջբան երիցու որդին տէր Ըուլսթագէսին ի վայելումն իւր և Սայ եղեալ ժողովրդեանն և ծէր Քրիստոս, Աստուածն ամենայնի բարով վայելել տացէ»: և լն: Խոկ բուն

գրչի և նկարչի անունն անյայտ է, յիշատակարանում կամ ձեռագրի որ և է տեղում չէ յիշվում. բուն յիշատակարանի եօթներորդ թերթը պակաս է, կտրած է, գուցէ այս թերթի վերայ լինէր և նոյն իսկ կնիքը Հեթում իշխանի, որովհետեւ այն ժամանակ սովորութիւն էր կնիք գրօշմել ձեռագիրների վերայ:

Յիշատակարանի 10 երրորդ երեսում ներքին լուսանցքի վերայ անկիրթ ձեռքով գրուած են Զարէլ թագուհու կառուցած հիւանդանոցին վերաբերեալ հետեւալ տոռերը. «Ի հայրապետութեան Տեառն Տէր Մինաս Կաթողիկոսին թվականութեանս Հայոց. նուաստո յամենային Յակոբ Սաեցի, որ յայժմ եմ փակակալ ի գուռն սուրբ Լուսաւորչի: Ի Կիլիկիայ այմ որ ի մարաստան է, թ և Գ Եղբօր հետ ելայ գնացի, սանդըխտով թվական նորա որ ի դուան վերայ կայր կարդացի, որ էր օրինակն այս. Կատարեցաւ յարմարումն շինւա (ծ տառ պատռած է) հիւանդանոցիս հրամանաւ մեծաւ փառաւք քրիստոսաէր թագուհ (տառը պատռած է) Զապելի ի թվականութեանն Հայոց ի Ո և Ղ.» (1241): Յիշատակարանը համառօտ պատմութիւն է Ռուբենեանց թագաւորաց մինչև Լեռն Գ.

### ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵԹՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱԽՈՐԻ ՃԱՇՈՑԻ.

Փառք ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

Ի թուականութեանս Հայոց ԶԼԵ. յանդ ելեալ կատարեցաւ աստուածախօս մատեանս, հրամանաւ աստուածասէր և ամենիմաստ բարեպաշտ և հանճարեղ պարոնին Հեթմոյ՝ որդւոյ քրիստոսապոակ արքային Լեօնի. որ լի և պատարուն իբրև զծաղկազարդ բուրաստան՝ հաւաքեալ ի հին և ի նոր օրինաց, ի պէտս պայծառութեան աօնից Տէրունականաց՝ հրաշափառ ծննդեան Քրիստոսի, և կենսաբեր չարչարանացն, փառաւոր յարութեանն, և պանչելի համբարձմանն, պայծառ գալստեան սուրբ Հոգւոյն, և այլոց փրկչական տնտեսութեանցն. ընդ որս և սրբոցն Աստուծոյ՝ Առաքելոց և Մարգարէից, բազմաշարչար մարտիրոսաց, հայրապետաց և միանձանց և ամենայն հաճոյացելոց Աստուծոյ, որով մեծախօրհրդութիւն և շնորհ մերոյ փրկութեան միշտ հոչակի յեկեղեցիս սրբոց, խնկանուէր հըն-

մամբ առաջի Աստուծոյ՝ ի բարեխօսութիւն մեզ մեղաւորաց և  
ի վարդապետութիւն խրատու յաւիտենական կենացն ժամա-  
նելոց։ Զայս խրախճանութիւն հոգեւոր և անմահական փար-  
թամութիւն ստացաւ՝ նախայիշատակեալ բարեսէր պարոնս մեր՝  
շեթում, որ է շառաւիդ բարեշնորհ՝ բղխեալ յարմատոյ թա-  
գաւորութեան Թորգումեանս սեռի, և Ազքանազեանս տոհմի.  
որ յայտնաբանեալ լինի՝ զայս ձեւ օրինակի. Յորդամ յաղախ-  
նածին զօրացն սրոյ, և ի պարսկական իակամիտ նենգութենէ  
սպառեցաւ թագաւորութիւնն Հայոց՝ ի տանէս արեւելիդ, և  
բարձաւ բազուկ տէրութեան նոցին ի կողմանցն հիւսիսոյ, յայն-  
ժամ սահեալք իշխանք Հայոց և որք ընդ իշխանութեամբ նո-  
ցին, զետեղեալ պանդխտեցան ի ստորին կողմանս Գամբաց և  
Պոնտոսի. որք և անդանօր նեղեալք և նհանջեալք ի նենգա-  
ժէտ ազգէն Յունաց, խոյս տուեալ եկին ի սահմանս կեսարեայ  
կապադովկացւոց. որոյ տիրեալ արքայն մեծ Գագիկ, և զբա-  
զում ի Յունաց սատակեալ, ընդ որս և զմետրապօլիտ քաղա-  
քին զՄարկոս՝ որ եղեռնական բարուք զանուն ազգին Հայոց  
շանն իւրոյ մակադրեալ՝ արմէն անուն վերաձայնէր. Արքայն  
բարեշուրք զնա և զշունն իւր ի միում քրծի ածեալ՝ չար հա-  
րուածովք գանից, ի միասին սատակեաց. Վասն որոյ և յընդ-  
հանուրս Յունաց բնակչաց աշխարհին որսացեալ եղեւ, որով և  
սպանաւ արդար արքայն յանբարիշտ որդւոյն Մանտալէի, ի  
բերդն Կնգուակաւի: Եւ յայնմ պատճառէ ցրուեցան պայա-  
զառքն Հայոց և այլ ևս խառնաղանջ բազմութիւնքն՝ ընդ բա-  
զում տեղիս և գաւառս պանդխտեցեալք: Ընդ որս և մեծա-  
փառ ոմն՝ իշխան իշխանաց, ի սեռէ թագաւորութեան արեա-  
նառու մեծին Գագկայ, Խուրէն, յինքն յարեալ զյուլովս ի զօ-  
րացն խաղացեալ գոյ, և առնու զամրոցն զկօսիտարայ, յո-  
րու մ և զնէ ինքեան՝ տուն իշխանութեան, և տիրէ լեռնա-  
կողմանցն Փոխիւոյ և բարեպաշտութեամբ կենօք կացեալ փո-  
խեցաւ առ Քրիստոս:

Յաջորդեալ զփառս նորա, ոբդի նորին՝ Կռստանդին, այր քաջ  
և արդարագործ, որ և ի բազմաց սիրեցեալ եղեւ՝ բնակչաց աշ-  
խարհիս Կիլիկիոյ. որոյ ձեռնտուռաւթեամբ ելեալ ի ծովակողմ՝  
Տորոսի՝ տիրեաց նահանգին այնորիկ, նախ՝ առեալ զդղեակին  
զԱշհկայ. և ապս անտի յառաջ յոլովից տիրեալ տեղեաց,

գաշտաց և ամրոցաց՝ զյոքունո ի Յունաց հարեալ։ Այլ և փը-  
ռանդ զօրուն, որ յանտիոք, նիզակակից եղեալ ընդդէմ Խսմա-  
յէլեան զօրուն, և քաջութիւնս զարմանալիս գործեալ անդա-  
նօր, հիացոյց զարիականաց գունդն, յորոց և Կոմութեան ա-  
նուն ստացեալ, մարգիզ զնա վերակոչէին։ Եւ այնպիսի յաղ-  
թական կենօք կեցեալ, և ծնեալ երկու որդիս՝ զթորոս և զԼեռն,  
բնքն փոխեցաւ առ Քրիստոս։ և թաղեցաւ ի սուրբ ուխտն  
կաստաղօն։ տուեալ զիշխանութիւն իւր՝ որդւոյ իւրոյ Թորոսի,  
այն՝ որ ի Յունացն պատուեալ Պուտոսնեաստիօս կոչեցաւ։ Որ և  
խկոյն ընդ տիրելն՝ ինդրեաց զվրէժ Գագկայ յորդւոցն Ման-  
տալէի, և առեալ զամրոցն յոլով գանձիւք և զնոսին չարա-  
մահ սատակեալ, բերեալ ընդ ինքեանս զպատկեր Տիրամօրն՝  
եդ ի դղեակն Անարզաբայ, զոր իւր առեալ էր ի Յունաց։ յո-  
րում և շինեաց զհոչակաւոր տաճարն, և եդ անդ զպատկե-  
րըն՝ որպէս և գրեալ է յարձանի՝ ի շինուածոս տաճարին։ այլ  
և բազում՝ եկեղեցիս և ժողովարանս միանձանց շինեալ, և  
առատատուր պարգևօք՝ կարգաւորեալ Ճոխացոյց, միանգա-  
մայն և հիւրանոցս բազումն, և ամենայն ազգաց քրրստոնէից  
տեղի և տուն պատրաստեալ՝ յարգացաւ, բարձրացաւ և հրա-  
չակեցաւ յամենայն լեզուս, որք զկիրկիս անուն թողեալ՝  
Թորոսի երկիր զաշխարհն նորին վերաձայնէին։ և նա բարւոք  
վարուք կենցազավարեալ հանգեաւ ի Քրիստոս, և թաղեցաւ  
ի սուրբ ուխտն Դրազարկ՝ թողեալ որդի մի, որ նենդեալ սպան-  
մամբ յամբարշտաց ոմանց։ Վասն որոյ ընկալաւ զիշխանու-  
թիւն մեծին Թորոսի, եղբայր նորին Լեռն որ և ծնեալ երիս  
որդիս, զթորոս, զմտեֆանէ, և ի հարմէ, զոմն՝ Ռուբէն անուն։  
Այս Լեռն տիրեալ Մամեստիոյ և Տարսոնի, և ամենայն սոցին  
նահանգի, և աջակցեալ ֆուանկադ ի գործ պատերազմի՝ քա-  
ջութեան անուն ստացաւ, և կացեալ յիշխանութեան կարս-  
դագոյն կենօք, և առաքինի վարուք՝ մինչեւ եկն թագաւորն  
Յունաց՝ Փէսուփերութէն ի Կիլիկեա, և պատրանօք կալեալ ըզ-  
Լեռն՝ ըմբռնեաց ի կապանս երկու որդւովքն՝ Թորոսիւ և Ռու-  
բենաւ, ոչ դիպեալ անդ՝ Մէհին և Ստէֆանէին, զի կային  
յՈւռհայ՝ առ կոմն նորին, որ էր քեռի ինքեանց։ Առեալ Փէս-  
ուփերութէն զԼեռն որդւովքն՝ տարաւ ի Կոստանդնուպոլիս և  
արկ ի բանտ, յորում տեղւոջ Ռուբէն վասն անհնարին քա-

ջութեանն կուրացուցին՝ կուրացեալ նախանձով ազգն Յունաց։  
 Եւ մեծն Լևոն՝ որդին նորա Թորոս մնացին անդանօր ի բանտի.  
 և իշխանութիւն Հայոց բարձաւ ի Կիլիկիոյ, տիրելով վերստին  
 Յունաց։ Յետ ժամանակաց ինչ լինելոյ ի բանտի, ետես երազ որ-  
 դի նորա Թորոս, և պատմեաց հօր իւրում, թէ տեսի յանութջու,  
 զի այր ոմն տայը ցիս նկանակ մի հացի, և ձուկն ի վերայ, և  
 ես առի և քեզ ոչ ետու ի նմանէ. և հայրն խնդացեալ՝ ելոյն  
 զտեսիլ որդւոյն. թէ՝ ունիս վերստին տիրել Կիլիկիոյ, զոր նախ-  
 նիքն մոր կալան քաջութեամբ. այլ և ընդարձակեսցես զտէ-  
 րութիւն քո մինչեւ ի ծով՝ զոր ձուկն նշանակեաց, սակայն ես  
 յայն ոչ ժամանեմ։ Որ և եղեւ իսկ, զի մեռաւ մեծն Լևոն ի  
 Կոստանդնուպօլիս։ Եւ մեծն Թորոս գտեալ օգնութիւն յԱս-  
 տուծոյ, և ի դիպոլ ժամու վերստին եկն ի Կիլիկիա և ձե-  
 ռընտուութեամբ լեռնակողմանցն Տորոսի ազինս Հայոց, որ մը-  
 նացեալ էին անդանօր, աիրեաց նախ՝ Վահկային, և ամենայն  
 Փոխուգիոյ, և յետ սակաւուց Անարզաբայ և ամենայն դաշտա-  
 կողմանն, զորոյ զյեղանակ գալստեանն ի Կոստանդնուպօլսէ  
 և զտիրելոյն Կիլիկիա՝ այլ և այլ օրինակաւ պատմեն գիրք-  
 բայց որպէս և է գթութեամբն Աստուծոյ և օգնութեամբն ա-  
 զատեալ ի բանտէ, վերստին տիրեաց իշխանութեան նախնեաց  
 իւրոյ՝ զոր յափշտակեալ էր Յունաց։ Եւս և ընդարձակեալ  
 զբազուկ տէրութեան իւրոյ՝ գնաց ի Մամեստիա՝ և առ զնա.  
 և մինչ կայր անդ յանհօգս, Տուկն Յունական ազգին, որ էր ի  
 կայսերէ կարգեալ, ժողովեալ զօրոս իւր, ևս և զշայկազունս,  
 զնաթանիէլեանք զտեարսն Ասկուռսայ, և զշեթում տէր  
 Լամբրունին, որը և նոքա յարեւելից՝ ի սրոյն Խսմայելացւոց  
 խոյս տէւեալ՝ եկին և կալան զկողմանսդ նախասացեալ, և մտին  
 ընդ հնազանդութեամբ կայսերն Յունաց. վասն որոյ և ընդ նո-  
 ցին զօրաց և զօրապետի՝ եկին ի վերայ Թորոսի ի Մամեստիա.  
 և նա յարուցեալ սակաւուք արամբք անզէն և անպատրաստ ի  
 վերայ անկաւ բիւրական զօրացն յեղակարծ ժամու, զյոյնսն  
 եսպան և զշայկազունս ձերբակալ արարեալ կալաւ, և յե-  
 տոյ ազատեաց։ Եւ այսպէս քաջացեալ՝ էառ զծարսօն և զյո-  
 լով մասն Սավոփոյ. զորոյ քաջութեան համբաւ լուեալ կայսրն  
 էմմանուիլ՝ սրդին Փէռփէրուժէնի, միմուեալ իբրև զառիւծ՝  
 եկն զօրօք բազմօք ի Կիլիկիա՝ ըմբռնել զԹորոս, և պաշարեալ

զնա ի գղեակն Բարձրաբերդ կոչեցեալ։ Յարձակեալ ապա քաջն Թորոս ի վերայ ժողովոյն Յունաց՝ զբաղումն եսպան, և զյոլով Սևաստիոսո գերի տարեալ ի գղեակն վաճառեաց ընդ ոսկեայ կոյսերն էմմանուէլի։ և զգանձն բաշխեաց՝ իւրոյ հետեւակաց զօրուն։ Ընդ որոյ քաջութիւնն և առատամոռութիւնն զորմացեալ՝ կոչեաց զնա իւր յորդեգրութիւն, և ետ զկիլիկիա ձեռնագրով և ոսկի վուլով Թորոսին և այլ գանձս բազումն և ինքն գնաց ի Կոստանդնուպոլիս։ Եւ վերստին լսւեալ զհամբաւ բարութեան և զքաջութեան մեծին Թորոսին՝ կայսրն էմմանուէլ և ոչ կարացեալ տանել նախանձու, սկսաւ կաշառօք գրգռել զլին - Ասլան սուլտանն յիկոնիոյ՝ ի վերայ Թորոսին, որ և եկեալ բազում զօրօք ի Կիլիկիա՝ պաշարեաց զթին։ աւան, և ի Տեառնէ պատուհասեալ ախտիւ և ցաւօք, զօրոց զերիւարսն շանաճանն սպառեաց։ Այլ և մեծն Թորոս ասպատակեալ զաշխարհն յիկոնիոյ՝ աւերեաց և զառ և զաւար էած ի Կիլիկիա։ վասն որոյ յայսմանէ Խլին - Ասլան և ի Հարուածոցն Աստուծոյ նեղեալ՝ ամօթով դարձաւ յաշխարհն իւր. սէր՝ երդմասք եղեալ լնդ մեծին Թորոսին. և այլ ոչ հրապուրեցաւ ի բանսն էմմանուէլի։ Բայց իբրև եկն Թորոս ի Կոստանդնուպոլսէ ի Կիլիկիա՝ լուեալ եղբօրն նորա Ստէփանէի եկն առ նա. բայց Մէջն մնաց առ Նուրատին սուլտանն Հալպայ. և Ստէփանէ ձեռնտուութեամք եղբօրն իւրոյ գնաց ի Սեաւ լեառն՝ և տիրեաց ամենայն կողմանցն այնոցիկ, այլ և կալաւ զԳերմանիկէ և զՊէհէմնի, և դաւեալ ի Յունացն սպանաւ յեռանդան կաթսայի, և թաղեցաւ ի սուրբ ուխտն յԱրքայ - կաղնին, թողեալ իւր երկու որդի զՌուբէն և զԼեռն, որ և յետոյ թագաւորեաց։ Այլ և մեծն Թորոս տիրեալ քաջութեամք Կիլիկիայ և Սավրիոյ, վարէր զիշխանութիւնն ըստ հաճոյիցն Աստուծոյ, զի էր այր բարեպաշտ և ողորման, մեծախսորհուրդ և առատամիտ, վարժեալ հին և նոր օրինօքն Աստուծոյ. տեղեակ գոլով և ամենայն իմաստասիրական արհեստից՝ զօրմէ ասեն հոգի մարդարէութեան ունել, որ և զբազում դժուարալոյծ բանս մեկնեալ, որ գտանի այժմ առ մեզ. կեցեալ սա այսպիսի բարեղարդ կենօք՝ փոխեցաւ յաշխարհն կենդանեաց, և հանգուցեալ եղաւ ի դամբարանի, ի հոչակաւոր անապատն սուրբ ի Դրազարկն, և զերկիր իշխանութեան

իւրոյ և զմատագ որդին իւր վստահացաւ յաներն իւր՝ Թոմաս  
անուն, իշխան մեծ, զոր և պայլ իսկ եղ հայոց յետ իւր։ Այլ  
Մէջն լուեալ զմահ եղբօր իւրոյ՝ զմեծին Թորոսի, Էառ զօր  
բազում ի նորատին սուլտանէն և եկն առնուլ զուէրութիւն  
ի վերայ Հայոց, և բազում չար հացուցեալ աշխարհիս Կիլիկե-  
ցոց, յորմէ նեղեալք բնակիչք և իշխանք աշխարհիս, կամօք  
ձեռնոու եղեն նմա՝ տիրել ի վերայ ինքեանց ուստի ընդ գալն  
նորա, Թումասն փախչէր յԱնտիոք՝ ուստի և եկեալն իսկ էր,  
և զորդի Թորոսին ամբարիշոք ոմանք կալեալ սպանին։ Եւ  
Մէջն տիրեաց որոց ցանկայր անձն նորա. սակայն վասն խստա-  
սրտութեանն ոչ կարացեալ յերկարել՝ վաղվաղակի սպանաւ ի  
զօրաց իւրոց ի քաղաքն Սիս, և թաղեցաւ ի վանքն Մեծ քար  
կոչեցեալ, զսր իւր իսկ շինեալ էր։ Եւ զորք աշխարհին առա-  
քեալ բերին զօրդիոն Ստէֆանէի, որ մնանէին առ քեռին իւր-  
եանց Բակուրան ի Ցարսօն, և կացուցին իշխան և պարոն ըզ-  
Ռուբէն զորդի Ստէֆանէի, որ որ եղեւ այր աշխարհաշէն, ա-  
ռատամիտ և բարեգործ, որոյ ել համբաւ անուան նորա ընդ  
ամենայն աշխարհ։ Վասն որոյ Հռովմայեցիքն զնա պատուեալ՝  
յազգէ թագաւորութեանն կին ետզւն նմա, յորմէ ծնաւ եր-  
կուս դստերս։ Սակայն ի տէրանց Լամբրունի եղեւ դաւ նմա,  
զի սղալերէր Ռուբէն զլամբրուն, և նոքա նեղեալ յղեցին առ  
բրինձն Անտիոքու, զի ելս Հնարեսցէ իրացն. իսկ Բրինձն խա-  
բանօք ի ճաշ կոչեալ զՌուբէն՝ արգել զնա յԱնտիոք՝ վստահա-  
նալով թէ, կարասցէ այնու զկիլիկիս առնուլ։ Այլ Ռուբէն յը-  
զեաց առ եղբայր իւր Լեռն՝ նստել յաթոռ պարոնութեանն և  
պահել զերկիրն և պնդել զսղար բերդին Լամբրունի. և Լեռն  
և իշխանքն նոյնպէս արարին։ Խոկ Բրինձն իրեւ ետես՝ եթէ  
ոչինչ շահի այնու, ապա անկաւ ի բանօ վաճառելոյ, զոր հաւա-  
նեալ պարոն Լեռն և իշխանքն, ետուն գանձ և երկիր, և թա-  
փեցին զՌուբէն, որ եկեալ և վերստին յինքն էառ զպարոնու-  
թիւն՝ կեցեալ աւուրս ինչ բարիփք կենօք, և ի վախճան մահու  
հասեալ՝ խրատեաց զեղբայրն իւր բազում իմաստութեամբ և  
բարութեան իրատով թողեալ ի նա զիշխանութիւնն և զդըս-  
տերս իւր՝ ինքն հանգեաւ ի Քրիստոս, և կրօնաւորեալ թաղե-  
ցաւ ի Դրազարկն, Լեռն ընկալեալ զտէրութիւն յեղբօրէն,  
առաւելու յամենայն բարութիւնս քան զնախնիս իւր. և ևս

ընդարձակեաց զսահման տէրութեան, և մինչդեռ կայր քաջութեամբ և բարութեամբ, ել ի վերայ նորա Ռըստոմ՝ յաղգէ իսմայէլի անթիւ զօրօք, և նկուն եղեալ օգնականութեամբն Աստուծոյ խորտակեցաւ առաջի Լեռնի մեծի և մնացեալքն փախստական եղեն, տիրեաց և կողմանցն Սալիրիոյ մինչեւ յիտալիա. Էառ զԱռակլիա և զԱռոարիա և ընդ գանձուց փոխանակեաց. բազում ամրոց և դղեակս շինեաց, յոլով վանորայս և աղքատանոց կազմեաց. և գողեացն տունս և ռոճիկս պարգևեաց և բարութեամբ զաշխարհ իւր ելից, զոր զբարեգործութիւն նորա լուեալ թագաւորք երկրի ստիպէին զնա՝ թագ առնուլ, յորոց և ումբրուրն ֆուանգաց և կայորն Յունաց, առաքեցին նմա թագ և գանձ բազում. և նա ընկալեալ զայն աշխարհաժողով բազմութեամբ և եկեղեցւոյ լրութեամբ՝ պատկեցաւ թագաւոր Հայոց, և նորոգեաց զաթոռ և զգաւազան թագաւորութեան Թորգումայ. և ելից զաշխարհ խաղաղութեամբ՝ իբրև զգրախտ պտղաւէտեալ. ամուսնացոյց զդուստր եղբօր իւրոյ՝ յԱնտիոք, և ապա առեալ զԱնտիոք ետ նմա, և որդւոյ իւրոյ այնմ՝ որ Բրինձ Ռուբէն կոչեցաւ, Էառ զԱրասուս և զՊաղրաս, տիրեաց և Լամբրունին: Ետ աւուրց եկն ի վերայ նորա սուլտանն Հուսունց Քայքայուզն և պաշարեաց զդղեակն զԿապան, ըմբռնեաց և զիշխանսն Հայոց և զօրագլուխն Պարոն Կոստանդին, իսկ արքայն Լեռն առեալ զմնացեալ զօրս իւր՝ առապատակեաց յաշխարհն Դամրաց, և բազում ոճիրս գործեաց և առեալ զառ և զաւար դարձաւ ի Կիլիկիա, զոր լուեալ Քայքայուզն՝ եթող զԿապանն և զերկիր թագաւորին և ամօթով գարձաւ յաշխարհ իւր, ընդ սակաւ գնոց դարձոյց զիշխանսն և սէր՝ երդմամբ եդ ընդ արքային Լեռնի: Բայց արքայն Լեռն կացւա ի պարոնութեան զերկոտասան ամ և թագաւոր իբ ամ փոխեցաւ առ անմահ արքայն Քրիստոս, և հանգուցաւ ի ոուլը ուխտն յԱկներն, վստահացեալ զերկիր իւր և զդուստր մի իւր Զապէլ տնուն յիշխան ոմն Ատան անուն, որ իսկոյն սպանեալ եղեւ ի Հաշիշեանցն ի Սիս: Եւ ամբարձեալ աղքական թագաւորին Լեռնի՝ պարոն Կոստանդին, Էառ յինքն զիշխանութիւն Հայոց, և զդուստր թագաւորին Լեռնի՝ զԶապէլ ամուսնացոյց յորդի իւր ի Հեթում, որ և օչաւ թագաւոր Հայոց, և եղեւ բարեբաղդ և անուանի

առ ամենեսեան։ Ծնաւ այս արքայ Հեթում՝ ի թագուհւոյ իւր Զապելէ՝ զԼԱՌՆ, որ այժմ է թագաւոր, և զեկբայր իւր զԹորսս որ խողխողեցաւ ի զօրացն Հագարացւոց, և դըստերս բազումն և աստուածահաճոյ կենօք կային ի Քրիստոս։ Խսկ ի վախճան կենաց հասեալ թագուհւոյն բարեպաշտի՝ փոխեցաւ ի Քրիստոս և եղեալ կայ ի սուրբ ուխտն ի Դրազարկն։ Յայնժամ արքայն Հեթում խորհրդածեալ զիսաղաղութենէ աշխարհիս Հայոց՝ յուղի անկեալ գնաց առ ազգն Մուղալ՝ զոր Թաթարն կոչեն և յուկտ մտեալ ընդ նոու, զմշտնջենաւոր խաղաղութիւն այսու ոտացաւ աշխարհի իւրոյ ի նոցտնէ։ որ ապականէին զամենայն աշխարհ։ յայսմանէ լցեալ նախանձու՝ պաշտօնեայք Մահմէտի ամենայն ուստեք նիւթէիննենգութիւն ի վերայ Հայոց։ Այլ նա օգնութեամբն Աստուծոյ և Ճեռնտութեամբ Մուղալ զօրուն էաւ զմեծն Գերմանիկէ և զՊէհեսնի, թափեաց և զնախնեաց իւրոց զաշխարհ՝ զյափշտակեալն յայլոց, և մինչ կայր աշխարհ Հայոց ի հաշտութիւնն Աստուծոյ և ի բարութիւնն, յայնժամ բազմապատիկ մեղօք լցեալ ազգ մարդկան՝ ձգեցին ի վերայ ինքեանց զարժանասաստ բարկութիւնն Աստուծոյ, յորմէ եղեւ զօրացեալ ազգն Հագարացւոց, և բռնակալեաց ոմն ծառայ յԵղիպտոս և տիրեաց ամենայն տանն Սեմայ, և շարժեցաւ ընդդէմ՝ քրիստոնէից, աւերեաց զծովեզրեայսն, քակեալ կործանեաց զմեծն Անտիոք, գերեաց զանհամար անձինս քրիստոնէից, և զանթիւս մաշեաց ի սուր սուսերի։ Բայց յառաջ քան զայս՝ եկն ի վերայ թագաւորին Հեթմոյ և տանս Հայոց, վանեաց զզօրսն քրիստոնէից, եսպան զԹորոս՝ զորդին Հեթմոյ թագաւորին և զՄեծն Լեռն, որ այժմ է թագաւոր յետ բազում՝ քաջութիւնս կատարելոյ նորա ըմբռնեաց զնա ի գերութիւն։ վասնորոյ և յայնմանէ համարձակեալ եմուտ յաշխարհ Հայոց և հրկիզութեամբ ապականեաց, և զբնակիչսն ի սուր մաշեաց, զառ և զաւար առեալ՝ ել ողջամբ և գնաց յաշխարհ իւր։ Բայց որդի թագաւորին Լեռն՝ ոչ զանդիտեալ ի ծառայութենէ Խսմայելացւոցն, այլ պինդ հաւատով և արիագոյն սրտիւ կացեալ ի գերութեան, նախ՝ բանիւք քաջալերէր զբնակիչս, որ յամբոցս աշխարհիս գայթակեալք էին պինդ կեալ և ոչ տալ ի ձեռս։ և ապա ի յանդիման լինելն Սուլտանին՝ զարմացոյց զամենեսին իմաստուն

բանիւքն և ահարկու կայիւքն, պատրաստ գոլովի ի հարցմունսն և ի պատասխանիսն, այլ և ի ձիընթացս առաջարիդի եղեալ ընդ սուլտանին՝ առաւելագոյն գտաւ քան զամենայն զինուորսն ի հրահանգո ձիավարժութեան՝ մինչ զի յամենայն գործս և ի բանս նորա հաճեալ և հաւանեալ սուլտանն ազատեաց զնա ի բանոէ և ի կապանաց, և պատգամ յղեալ առ թագաւորն Հեթում և սիրով երդմամբ մեծագոյն պարգեաք դարձոյց զմեծն Լեռն յաշխարհ իւր. որ և ի գալն վերստին նորոգեցան բնակիչք Կիլիկեայ և ամենայն զարմք քրիստոնէից, և իսկոյն հայր նորա և ամենայն աշխարհն ետես զնա յաթոռ Պարոնութեան, քանզի ոչ առ յանձն լինել թագաւոր յաւուրս կենաց հօր իւրոյ: Յետ այսորիկ հիւանդացաւ թագաւորն Հեթում, որ և մեռաւ իսկ՝ լեալ կրօնաւոր թաղեցաւ ի սուրբ ուխտն ի Դրազարկ: Եւ մեծն Լեռն սուրգ պահեալ զերիս ամիսս ցաւագին անձամբ, և ապա մեծարեալ ի Ղանէն և յամենայն թագաւորաց և մերձակայից միաբանութեամբ ամենայն աշխարհիս օծաւ թագաւոր ի վերայ ամենայն Հայոց, և եթող ամենեցուն զյանցանս ի սըրտէ, որք սիսալեալ էին նմա, զնորհեաց պարգես ամենեցուն: Է սուրբ արքայն Հայոց առատամիտ, ողորմած, ունկնդիր զզուելոց, ապաւէն վտանգելոց, ողջախոհ և մաքուր, երկայնամիտ և ժուժկալ, և յամենայն նեղութիւնս համբերով նման Յովքայ, և մեծախորհուրդ իբրև զնա, ի փորձութիւնս անկեալ նման նմա. քան զի յիշեալ (թերթ պակաս է) ... զնոսա. որ աւուրս Լեռն թագաւորիս եմուտ ի իւրեանս, գարձեալ աւուրս Լեռնի եկն զօրօք բազմօք աշխարհս Հայոց և եկեալ Արտապ և Թուրքման ամբոխիւք, որ ընդ նմա միաբանեալ էին և աւերեցին գարձեալ զաշխարհս Կիլիկիա: Եւ արքայս Լեռն ըստ բնական քաջութեան իւրոյ զամենեսեան յորդորէր՝ մարտնչել ընդ Հագարացիսն, այլ զօրքն ոչ առին յանձն, զի սակաւք էին, բայց իբրև թշնամիքն գնացին, զամենեսեան քաջալերէր և միսիթարէր և առատապարգեաք յանձանձէր, մինչեւ հայեցեալ Աստուած ի պնդագոյն հաւատս նորա և ի սէր, գարձոյց զքաղցրութիւն ի վերայ մեր և սկիզբն արար բնակելոցս ի մէջ ցաւոց. քանզի ետ մերոյ թագաւորիս յաղթսւթիւն ընդգէմ թշնամեաց, նախ՝ կոտորեաց զբազում զօրս սուլտանին Մսրայ, ի Հարունին, և ապա զբազումս ի թուրք սեռէն, և յոլով աւար շահեցաւ, այլ և եգիտ շնորհս

առաջի գլխաւորին Մուղալ զօրուն՝ մինչ զի պարգևս և պատիւս յոլով շնորհեաց նմա. ամէն:

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻ ՏԵՐ ՍՑԵՓԱՆՈՍ ՀԱՄԵՍՑԱԶԱՐԴ ՔԱՀԱՆԱՑ.

Ի 1787 ԴԵԿՈՍԵՄԲԵՐԻ 30. ԹՈՒՂԹԻՆ քոյ որ ի վերայ Բաղդադու՝ ընկալայ, որով՝ զողջութիւն քո, ի Մատրաս սիրով ընկալնուլդ, ևս Կալկաթու, Սէյդաբադու, Դաքու, Սուրաթու, Բունբայու և Մունչիր Անդարու և Մատրասու պարոնաց անուանքն, և գովութիւնն և բարի լուրն գիտացի և ուրախ եղէ: Տացէ Տէր զի և տեսութեամբդ ուրախ եղէց: Միայն Բուշեռու գիրդ եմ տեսեալ. յօրէ անտի՝ ցայժմ միջաբեկ կայի և արտասուս աչացս ոչ գաղարիւր. որպէս և գիտես զբնութիւնս իմ: Որգեակ իմ, իսպառ մաշեցեր զիս թղթոյդ կարօտ պահելովդ: Ոչ ապաքէն աղայէի զքեզ՝ յամենայն ուստեքէ թուղթ գրել: Պատուիրեմ քեզ՝ թուղթդ անպակաս առնել, և առաջին թղղթոյ լուրն, թէ և ոչ բոլորն, գոնէ գլխաւոր բանքըն, յերկրորդ և յերրորդ թուղթն յիշատակել, զի թէ առաջինն ի վտանգ անկեալ՝ ի միւտոցն՝ և զառաջինն գիտացից: Զի ահա գեռ ի Բասրայու և ի Բաղդադու գրեանքդ չեմ տեսեալ, և ի տարակուսի կամ, թէ զի՞նչ արդեօք գրեալդ իցեն: Այժմ ի տեսանելս զթուղթդ, և ի գրելս զպատասխանիս, օրհնեմ զնա՝ որ ինսամէ զքեզ ողորմութեամբ, ևս գոհանամ զնմանէ գետնամած երեսօք և աղօթեմ վասն քո: Նոյնպէս և ամենայն ժողովուրդք և դաւթ քահանայիցն սովորութիւն են արարեալ՝ յամենայն կիւրակէի աւուր ի պատարագոցն յայտնի ծանուցում առնեն վասն քո: և արտասուօք Տէր ողորմեած ասեն, յաջողութիւն ինդրելով քեզ՝ և ընդունողացն զքեզ: Օրհնեացէ զնոստ Տէր՝ որք սիրով ընկալան զքեզ՝ և որք ընկալնուն, և թողցէ Տէր զմեղս նոցա: Հաստատուն ունիմ զյօյսն իմ յԱսոտուած՝ զի որպէս լսեմ, և դու պատմես զմարդասիրութիւն և զբարեխառնութիւն Զուղայեցի ազգին մեր. որպէս և գիտեմ զհեզութիւն և զհամեսութիւն քո, ամենեքեան սիրելոց են զքեզ ի փառս Աստուծոյ՝ և ի սէր ազգին իւրեանց: Ո՞վ իցէ այնքան անգութ, որ մինչ տեսանէ զքեզ վասն օգտի ազգին զմահ յան-

ձըն առեալ առանց ակնկալութեան ինչ, և ոչ միսիթարեացէ զքեզ։ Միայն թէ երկայնամիտ լինիցիս որպէս իմաստուն մշակ։ և սպասեացես լուութեամբ և հեղութեամբ։ մինչեւ ծանօթասցիս դու՝ և ծանիցես զնոսա, և յայտնեացես զխորհուրդս մեր՝ որոց և արժան տեսցես և մի գուցէ թէ տրամեալ ի պարզամիտ շարժմանց և ի բարուց ոմանց՝ տացես զսիրտ քո յալէկոծութիւն մրրկաց։ զի այն ամենայն ի սատանայէ յարուցեալ գիտացես և դու՝ լաւապէս գիտես, զի սատանայ մախացեալ չարանայ առ ազգն մեր, և իսկզբանէ անտի՝ ցայժմ՝ ոչ թողումտանել իմաստութեանն յազգս մեր։ Դիտեմ զի այժմ՝ ևս յարուցանելոց է ի վերայ քո չարաշնար մեքենայս, և զայն առաւել ի ձեռն դոսուց հրեշտակաց, քան ի մարդկանց, որով եթէ կարելի էցէ, խափանից զազգի մեր զիրկութեան պատճառըն և զառաքինութիւնս քո։ Այլ մի գուցէ թէ յաղթեալ մեզկասցիս ի սիրոյդ՝ որ առ ազգն քո, և ի գործոյդ՝ որ վասն նորին փրկութեանն։ Ուրեմն լուր որգեակ խրտու հօրս քո, և մի մերժեր զօրէնս մօրն քո՝ սուրբ եկեղեցւոյ՝ որ ուսուցանէ զքեզ եղբայրասէրս լինիլ, համբերել նախատանաց, յապտակիլդ՝ դարձուցանել և զմիւսն. օրհնել զհալածիչս, բարի առնել ատելեաց, բառնալ զտկարութիւն եղբարց, ողորմիլ աղքատաց, և մի անձինդ միայն հաճոյ լինիլ, Յիշեա զերկիւղածութիւնս քո որ ունիս. յիշեա և զազգասիրութիւնդ քո՝ որով և յանձդ առեր զայդ, և զանձդ քո պատրաստեցեր տալ ի մահ վասն ազգին։ Արդ՝ եթէ տեսանիցիս զքեզ հալածեալ և կամ յորոց ակն ունիս գտանել զօգնութիւն, եղեալ ներհակ, գիտացիր զի այնպիսիքն տգէտք են բանին արդարութեան և կամ յառաջադրութեանս մեր. և ոչ գիտեն զայն խորհուրդն զոր գու գիտես, վասնորոյ՝ ոչ են յոյժ մեղադրելիք, այլ ներելիք. քանզի՝ ոչ գիտեն ինչ։ Այլ ես յուսամ, զի շնորհիւն Աստուծոյ՝ բաւական ազգասիրութիւն և ճանաչողութիւն ունին ջուղայեցի իշխանքն մեր. դու որոց և արժան տեսցես և յայտնեացես զդիտաւորութիւնս մեր և զճգնութիւնս իմ ի նոյն, հաւատամ, զի և ոչ զանձինս իւրեանց խնայեսցեն, թող թէ զապականացու զարծաթն. մանաւանդ՝ զի ոչ ի վատնել խնդրեմ, այլ մնալ մշտնջենաւոր յիշատակ և նըշան ազատութեան ազգիս մեր։ Ուրեմն, կրկին զայս աղաչեմ

զքեզ սիրելի որդի իմ, մինչ ի սատանայական յորդորմանց տեսանիցես զոք հակառակ կացեալ գործոյդ քոյ և յորդորանացդ, տացես զսիրտ քո համբերութեան վասն փրկութեան ազգի քոյ, և մի ինչ հակառակեսցիս բանիւք, որպէս և հեղութիւն քոյ ուսուցմանէ քեզ: Քանզի՝ զայն տեսանելով, ազգասէր պարոնայքն սիրելոց են զքեզ առաւել քան զայլս: Վասնորոյ՝ ի յարհամարհելն զքեզ՝ մի նեղասրտիցիս, այլ աղօթեան վասն նոցա՝ զի լուսաւորեսցի և նոցին միոք: Եթէ և ոչ այնու գարձցին, մի յոյժ տրտմիցիս, այլ յուսան յողորմութիւն ծեառն, քանզի՝ զորոց անուանս և ընտրեալ է Աստուած ի սոյն յիշատակ գրիլ, նոքին օգնելոց են քեզ, և ոչ կարէ խախտել զնոսսա: Նաեւ, առաւել ուրախ լինիլ պարտիս, մինչ տեսանիցես զքեզի նեղութեան, և գործդ դժուարաւ կատարեալ. քանզի ի վերայ աշխատանացդ՝ և պսակդ առաւել գիտասցե՞ս:

Արդ՝ օրդեակ տես զի և ի վերայ իմ յարուցանէ սատանայ՝ մրգիկս, զի թէրես թուլացեալ յետո չոքիցիմ, այլ շնորհօքն Աստուծոյ յազթեցի և յազթեմ..... առաջին մրգիկն այս էր, զի հանգուցեալ Դրիգոր Սափարն՝ որ էր այր իմաստուն և յոյժ խորհրդական և պիտանի: Ինձ ի խորհուրդս. նա՝ պակասեցաւ ի միջոյ առ ծէր գնալով:

Երկրորդ մրգիկն՝ որ մեծ է քան զամնայն ձախորդութիւնու, այս է, զի ամենողորմած կայսերուցւոյ գալն ի քաղաքս մեր արգելաւ. որոյ գալն թէ որքան օգնութիւն և մի իթարութիւն և բարութիւն էր քաղաքիս, և առհասարակ ազգին մեր՝ լաւ գիտես, և թէ մեք ևս ինչպէս պատրաստութիւն տեսանք հանդիպման, որ եթէ գայր և տեսանէր, երանութիւն էր:

Իու մինչ աստ էիր, տեսեր զի ճարտարապետն հիմունս էարկ կայսերական պալատի ի գաւթի եպիսկոպոսարանին մեր: Ես մինչ աւարտիլն զանազան հանդէսս յօլինեցի վասն ընդ առաջ ելման մեր՝ առ յոտո նորին կայսերական մեծութեան: Որ ահա զմանաւորն գրեմ. այսու՝ և զայլս իմաստարիզել կարես:

Ատանաւոր գովասանութիւնս հիւսեցի, յորում և զանազան խնդիրս վասն առհասարակ ազգին մեր, մեր Քրիստոսականի Ալբ-բուռյն, և այլ առարք տեղեացն, զոր թարգմանել ետու ի ուռստաց լեզու, և հրաման ետու ուսուցանել պատանեկաց և աղջկանց, ամուսնացելոց և այրեաց, ազգատաց և հարստաց,

արհեստաւորաց և վաճառականաց, օհեսիսլաց և դատաւորաց և տանուտեարց, իւրաքանչիւրոցն յատուկ կերպ և մի եղանակ. և հրամայնցի աղջկանցն և պատանեկացն առնուլ ի ձեռս փունջո ծաղկանց, և նման սօլդաթից յառաջ գնալ և ծաղիկս տարածանել առաջի ի գետին, ոտանաւորն երգել ձայնիւ, և յետս յետս գնացեալ կէսն յա՞մէ և կէսն ձախմէ, ընթանալով և երգելով գնալ առաջի՝ յեղերս ճանապարհին,

Զկնի նոցա դասք ամուսնացելոց հանգերձ սանդեայ մանկամիք ի նոյն կերպ և ի նոյն եղանակ. կանաչացեալ ոտոս ծոռոց տարածանել ի ճանապարհայն և երգել զայլ ոտանաւորս:

Զկնի նոցա դասք այրի կանանցն ի նոյն կերպ, և զիւրեանց երգն երգել: Յետ նոցին դասք արհեստաւորաց ի նոյն կերպ, և իւրեանց երգօք, դաս դաս բաժանեալ' իւրաքանչիւր արհեստաւոր դաս մի. և իւրաքանչիւր դասուց գրօշակ մի, և նշան արհեստին ի վերայ, որոց թիւն էր 21. որք ընդ յառաջ ելանելն, խոնարհեցուցանել զդրօշակն ի գետին, և ապա բարձրացուցեալ երգելով գնալ: Զկնի նոցա դասք վաճառականաց ի նոյն կերպ, և իւրեանց երգօքն և ապրշմեղէն ճոթանքս արածանել ընդ ոտիւք. յետ նոցին դասք օ՞իսիայ, դատաւորաց, խորհրդականաց և տանուտեարց, և սոցին երգք ըստ պատշաճին: Զկնի նոցին դասք քահանայից, վարդապետաց զգեստաւորեալ' հանդերձ սուրբ մասամբք, պատշաճաւոր երգօք և սպիտակ գրօշակ սուրբ դատաստանատանն ի մէջ նոցա, յորում վերայ նկարել ետու տատանն նոյի և պատկեր կուսաւորչին: Հուսկ յետոյ քան զամենեսին, ես՝ զգեստաւորեալ, և ի ձեռիս աջոյ սուրբ նշանն և աւետարան, և ի յահեակ ձեռիս արծաթեայ սկաեղբ հաց և աղ: Նախ՝ զաջոյ ձեռինս մատուցանել ի համբուրել, և ապա զահեկանս ընծայել. և թիւ ձայնիւ օրհնութիւնս և գովութիւնս խօսել առ Աստուած՝ և առ նորին կայսերական մեծութիւնն:

Ընդ այս հանդիսական նախապատրաստութեանս, ի վերայ մարմարոնեայ արձանի քանդակել ետու զպասկերսն չորից աւետարանչացն, որոց՝ ի միում ձեռին սուրբ աւետարանն, և ի միւսում ձեռին ձեւ կայսերական հրովարտակի, յորոյ վերայ գրել ետու բանս ինչ, որ է այս: Մեզ՝ չորից աւետարանչաց ո յանձնեցաւ այս նոր նախ՝ ջետսն քաղաք, և ի մեր յանուն հիւք.

նադրեցաւ օծեալ քարամբք և հիմնարկութեամբք՝ ի Ցէր Յովսէֆի արք Եպիսկոպոսէն Հայոց՝ որ է յազգէ Երկայնաբազկեան. որ և ի ձեռն օծմամբ հիմնարկութեանն կարգեալ Եղաք հրամանաւն Աստուծոյ՝ պահապան և բարեխօս քաղաքիս. Ունիմք և անփոփոխ շնորհաց Հրովարտակ՝ շնորհեալ ի կայսերուհւոյն ռուստաց Եկատարինեայ. ուրեմն ամենայն որ քաղցր ակամբ Հայեցոի առ սոսա, փառաւոր առնէ զսուրբ աւետարանն Քրիստոսի և զհրամանն մեծի կայսեր. Զայս պատկերոն կանգնել Ետու ի չորեսին անկիւնս քաղաքին՝ ի մուտս դրանցն արեւելից և այլն, ի վերայ օծեալ քարանցն՝ զորս ի հիմնարկութեանն արկեալ եմ:

Նոյնպէս և պատկեր մի սուրբ Լուսաւորչին անուն ի քաղամիջի անդ՝ առ գրան մագիստրաթին՝ արեւելեան կողմ յետ կոյս սուրբ Լուսաւորիչ տաճարին կանգնեցի, ի ձեռին բացեալ Հրովարտակ և ի նմա գրեալ գլխաւոր բանքն շնորհաց կայսերն ռուստաց և հայոց լեզուաւ: Եւ զայլ այսպիսի բարեկերպ հանդէսս, թէպէտ պատրաստեցի, և սպամէաք մեծամեծ շնորհաց, այլ գետն Տօնաւիս քան զհասարակ սովորութիւնն մեծացեալ Եղե յոյժ, զոր պատճառ առեալ թէ՝ օդն ապականեալ է, վասնորոյ՝ և արգելաւ գտն, և զրկեցաք ի մեծամեծ յուսոյ. այլ պալատն, որ շինեցաւ արդեամբ թագաւորութեանն, մնաց մեզ և անդ նստիմք. և վասն տպարանին ևս անդ պատրաստեմ տեղի, որ մերձ աւուրքս բերելոց են: Ո՞չ ո՞չ անբախտութեանս իմ և աշխատանացս:

Երրորդ մրբիկն ես այս, զի ի վերայ այս պատմութեանս, Խաղարեան Դրիգոր Խօջամալն վախճանեցաւ, և տպարանն ե՝ թողի ներքոյ ԱՌՄ թուման պարտուց: Վէնէտիկցին իմացեալ պատրաստեցան մինչի ԴՌ թուման տալ և ի ձեռացս հանել: Խոկ ես և ոչ ԱՃ թուման ունէի, որ և վասն այս մոտածմանս ի մեծ հիւնդութիւնս անկայ. բայց՝ նա որ ոչ իսպառ բարկանայ. յանակնկալ ժամու, յանակնկալ վայրէ հասոյց ինձ զթագէսս վարդապետն, զոր՝ առաքեցի ի Պետերբուրի՝ պահել ըզտպարանն, մինչեւ ես հօգացից ինչ: Այսու ես միամտեալ՝ Աստուծով առողջութիւն գտի, Ելեալ գնացի ի Հաշտարիսն և ի Աղջար. անդ՝ առ մերձաւորս բանիւք, և առ հեռաւորս գրով օդնութիւն ինդրեցի, հաղիւ թէ ԴՃ թուման ժողովեցաւ:

ԴՃ թուման ևս ի տանէս վաճառեցի ինչ ինչ։ Զերեք հարիւրն տուի, ԹՃ թումանին սանադ և զամին տուեալ՝ ազատեցի զտը-պարանն։ Եւ ԴՃ թումանն կրկին ծախեցի ի վերայ տպարանին զպակասն լրացուցանել, հրամայեցի բերել ի Նախիջեան և անդ հաստատել։ Մինչ կարծէի թէ զերծայ ի մրրկացն. այժմ չորրորդ մրրիկն, քո այդպէս ցրտանալդ և սրտաբէկ գիր գրելդ եղեւ, որ թէպէտ պատճառն չես գրեալ, այլ ի թղթոյդ՝ յուսահատ տեսանեմ զքեզ, և որպէս զղացեալ՝ ի բարիս աշխատիլդ քո. որով՝ համարեա թէ միջաբէկ առնես զիս։ Այլ լուր որգեակ, միթէ դու որ յայդը նեղութիւն կրես, մեք աստ ի հանգստեան եմք։ Նոքա որք ազգասէրը են և ազատութիւն ազգին ցանկան, պարտին և նեղութեանցն համերել։ Օրինակ առցուք մեզ զթեսու և Քաղէք լրտեսոն Մովսէօի սուրբ մարդարէին, և մի գաղարեսցուք պատմելոյ զգեղեցկութենէ և շահաւէտութենէ իմաստութեան և զհարկաւորութենէ դպրատանց, աղքատանոցաց, հիւանդանոցաց և որբոց տանց, ուստի՝ և գովեսցուք զպտուղս սոցա, որպէս և նոքա պատմէին զբարութենէ երկրին աւետեաց՝ ցուցանելով զբերեալ պտուղն։ Ուրեմն, յուսասցուք յԱստուած և ի շնորհս նորա, և փախուցեալ ի փառամոլութենէ և յաշխարհասիրութենէ քարոզեսցուք, մինչեւ հաւանեցուացուք զանհաւանսն, որք կան՝ և ի փափկութիւն տուեալ զանձինս գիրանան կաթամբ ոչխարացն, և զգազանաբեկացն ոչինչ հոգան, որոց և պահեալ կայ հզօրագոյն դատաստանն Աստուծոյ։ Արդ՝ եթէ այն երկու լրտեպն պատմելով հաւանեցուցին զխստասիրտ ժողովուրդսն Խորայէլի, որչափ առաւել դու պարտիս արիանալ և ուրախութեամբ խօսել և պատմել այդպիսի քաղցրասիրտ, ողորմած և ազգասէր պարոնացն, որոց խոնարհութիւնն և հեղութիւնն ի վաղուց գիտեմ, և դու ինքդ գրես. և մանաւանդ՝ ոչ է հարկաւոր դոցա յորդորել շատ, մինչ ինքեանք գիտեն լաւ քան զմեզ, և ինքեանք առաւել ցանկան այսպիսի ազգաօգուտ յիշատակաց յազգը մեր. որպէս և հանգուցեալ Գրիգոր Միքայէլն ինքնին սիրահարեալ ցանկացաւ այսպիսի յիշատակ ստանալ, վասնորոյ՝ և զայնքան ծախս անխնայաբար ետ. ապա ուրեմն, ի բաց դիցուք զանյուսութիւնն, և յայտնելով զխորհուրդս մեր՝ աղաշեսցուք զիշխանս մեր, մինչեւ հաւանեցուացուք և գոցուք զօգնու-

թիւն. թերեւս օգնականութեամբ դոցին՝ զազգն մեր ածցուք յարհեստն ազատական, և այնու՝ թողցուք մեզ՝ և դոցա յիշատակ յերկինս և յերկրի: Ուրեմն, ցուցցես իշխանացն մերոց զպտուղ աւետեացն, զոր առաքեալ եմ քեզ ի վերայ Բրիտանիու և ի վերայ Նոր Զուղայու երկու սանդուղ նորատիպ գրեանք:

Թերեւս դու պատասխանեսցես թէ՝ միայն մեր աշխատելովն զիանը կարելի է լինիլ. լուր ինձ քաղցր որդեակ, նախ՝ զի չեմք միայն, Աստուած ունիմք օգնական մեզ. երկրորդ՝ զի առ որս և զիմեալ ես, են իմաստունք և ազգասէրք և երկիւղած և բարիք. երրորդ՝ զի և ի հնումն երկու լրտեղքն՝ յաղթեցին տասանցն, թէւ բազում նեղութիւնս կրեցին: Այսպէս և մեք, թէպէտ նեղութիւնս կրեմք, բայց Աստուճով մտանելոց եմք յերկիրն ազատութեան. քանզի՞ ոչ ոք կայ մեզ հակառակ, և զի լսեմ զի դոքա առաւել սէր և փոյժ ունին ազգի ազատութեանն. թէպէտ կարողքն՝ մեզ ոչ օգնեն, և ոչ թէ արգելեն: Ի սոյն միջոցիս սրբազնասուրբ կաթուղիկոսն՝ ձեռամք մեր Գրիգորին առաքեալ էր մեզ փիլմն, մատանի և խալիչայ, ընդնմին և նորոգեալ էր զնուիրակութիւն և զառաջնորդութիւն: Նա՝ որ գլուխն է ազգին մեր, գիտես թէ որքան սիրէ զիս, նոյնպէս և այլքն, ապա զի՞նչ արգելու մեզ արիանալոյ: Ես յուսամ յԱստուած՝ որ մերային իշխանքն Հնդկաց՝ սիրով իցեն ընդգրկեալ զքեզ, և հարցեալ զողջունէ մշակիս իւրեանց, և աստցեալ թէ՝ պատրաստեմք օգնել քեզ՝ ի վրկութիւն ազգին մեր:

Ուրեմն, որպէս ես յաղթեցի մրրկացն, նոյնպէս և դու արիացիր շնորհօքն Գրիստոսի, և իբրև այր իմաստուն գօրութեան ածեալ ընդ մէջ՝ փութանակի դիմեալ ի յոտս իշխանացն մեր. որոց՝ և համեստ բանիւք և ողբական դիմօք յայտնեալ զիսորհուրդս մեր: Ես յուսով եմ, զի ի տեսանելն զպտուղ տպարանին, հաւանեսցին լրտեսութեան քո՝ և օգնական եղիցին մեզ՝ ածել զազգն մեր ի վարժարանն իմաստութեան, ուստի և ելանէ իսկապէս համեղաճաշակ ողկոյզն խաղողայ և բըժըշկարար քաղցր նուռոն:

Ի Մատրասու արդիւնք ստանալդ մինչ գիտացի, թէպէտ դեռ չեմ տիրեալ ինչ, այլ այնու սրտապնդեալ՝ գրեցի առ պարոն

Յովհաննէս Աղաղատոն, առաքել ի նոր Նախիջևան զլաւ ճարտարապետ մի, գրեցի և ի նոր Նախիջևան կառավարչացն, զի ի գալ ճարտարապետին թղթաշինութեան գործարանի հիմունս արկցեն ի վերայ մեծ աղբեր վանքին, մերձ ջրաղացին, զոր շինեցի յետ գնալոյն քո: Աստուծով՝ ի գալդ շինեալ տեսանելոց ես:

Յելանելո իմ ի քաղաքէն, տպարանն, դուքաներն, մազագէքն, ջաղացն, այգին, և կամնոր հիմնելի շինելիքն, որոց մինն է թղթայ քարխանէն, մագիստրաթի կնքով և դատաւորաց ձեռագրով թուղթ հաստատեալ՝ արձանացուցի և վախմ արարի գպրատանցն, և յանձնեցի կառավարչացն, զի նոցին արդիւնքն նոքա տիրեսցեն, և միայն ի վերայ գպրատանցն ծախեսցեն, որով՝ անխափան մնացեն գպրատունքն և տպարանն. և թէ ես և թէ այլ ոք՝ որ զկնի մահուան իմ նստցի, չմերձեսցի յարդիւնո ինչ. այլ՝ և դատաւորքն ևս յինէն պայման առին. Դ տարի ժամանակաւ, զի եթէ ոչ վճարեցից զպարտո՝ որ վասն ծախուց շինուածոցն եղեալ է ի թագաւորական գանձուցն, յայնժամ ի տեղի պարտուցն թագաւորական գրեսցեն. զոր ծէր մի արացէ տեսանել ինձ:

Աղքատքն քաղաքին մինչ շատ նեղէին զիս և թարց արտասուաց՝ հաց անգամ ոչ կարէի ուտել, գանձապետս ընտրեցի քանի երկիւղած անձինս, նախ՝ ես գրեցի և թուման, և ապա այլք՝ որ կարողացան գրել, ոմանք ի, ոմանք ժ, է, և և այլն, Այսու պայմանաւ, զի որովհետեւ աղքատք կայ ունին, մինչ կւնդանի են զխոստացեալն առ յինքեանս պահեսցեն, և զշահն՝ յիւրաքանչիւր ամսո՞յ գանձապետացն տացեն, և նոքա բաժանեսցեն աղքատացն (այսպէս առնելով սակաւ ինչ հանգստութիւն գտի). և յետ մահուանն իւրեանց՝ զխոստացեալն պարտին գանձապետքն տիրել և շահեցուցանել, և զշահն բաժանել. և սոքտ անուանեցան հայր որբոց, որոց և թուղթ տուաւի մէնջ, զի այսուհետեւ մինչ տեսանիցեն զոք յաջողութիւն գըտեալ, նմա ևս գրել տայցեն, թերեւս այսպէս առնելով յաճախեալ արդարութիւնքն, յետ ժամանակաց աղքատանոց ինչ շինեսցի:

Նոյնպէս և ընտրեցի ի քաղաքին իԵ խոհեմ անձինս, և անուանեցի զնոսա աչք քաղաքի, և մագիստրաթի կնքով հա-

տատել ետու. զի յամենայն ուրբաթու աւուր ժողովեսցին ի խորհրդարանն, և իւրաքանչիւր ոք՝ զոր ինչ բարի խորհեալ իցէ վասն քաղաքին, յայտնեսցեն, նոյնպէս, եթէ չար սովորութիւն ինչ տեսցեն մոտեալ, խօսեսցեն ի միջի իւրեանց, և միաբանութեամբ խորհուրդ արարեալ՝ չարն բարձեալ՝ զբարին ընտրեսցեն և մագիստրաթին յայտնեսցեն, և գատաւորքն՝ հաւանեալ հաստատեսցեն, և հրաման հանցեն ի քաղաքն պահել. յուսամն զի այսպէս զգոյշ մնալով՝ չունիցի տեղի մոտել ի մէջ սոցավատ սովորութիւն ինչ արբեցութեան և շռայլ ծախուց և անպարկեշտութեան:

Թէպէտ որպէս և ցանկամ՝ զայնպիսի կրթեալ անձինս ոչ գըտանեմ ի միջի սոցա, այլ գոհանամ զԱստուծոյ՝ և շնորհակալ եմ զՀնազանդ որդիութենէ սոցա. զի զորս ուսուցանեմ՝ անտրտունջ կատարեն. Աստուծով ի վերադառնալդ, տեսանելոց ես ազգն քո մերձեալ յազատութիւնն, որով՝ զյիշատակն առ և օրհնեալ ժողովրեանդ այդ արձանացեալ յամենայն ականջա ազգին մեր՝ միջնորդութեամբ տպարանին և դպրատանց մանկանցն՝ ամենայն բերան գովութիւն և աղօթք են տալոց ձեզ՝ յիշատակելով զձեզ իրեւ մեծ երախտաւոր և ազատութեան պատճառ առհասարակ ազգին. ընդ ձեզ՝ գոնէ և զիս յիշատակել իրեւ յետին սպասաւոր բանին Աստուծոյ՝ և մշակ այգւոյ ազգին, որեւ յիշատակելով բազմացն, իւրաքանչիւրոց տալոց է Տէր պսակս, ըստ չափու աշխատանաց և սիրոյ՝ և արդեանց:

Վարժապետ Ստեփանն զոր առաքեցիր ի պօլսոյ, գիտութիւնը գուլելի է, այլ արբեցութեամբն նեղէ զիս, մին կառավարիչ ևս հարկաւոր է վասն սորա ունել: Ինչ և իցէ յանձար գոլոյս լուեմ, այլ պատուիրեմ զի ի վերադառնալն քո՝ զտիրացու Գէորգն որպէս և իցէ բերցես. շնորհակալ եմ զքէն և առ. այս, զի Թադէսս վարդապետն յորդորմամբն քո պտրատաւորեալ եկն աստ. բարով զԳէորգն և Ստեփանն ևս ածցես. այսպիսի գիտուն անձինս քանի և կարողես գտանել, ածցես. քանզի ի Հաշտարիսան և ի Պետերբուրի ևս բացան դպրատունք, վասնորոյ՝ կարօտութիւն կրեմք վարժապետաց:

Մեր քաղաքի պարտուց՝ Ժ ամն լրացաւ. և ժողովուրդքն գեռ ևս յաղքատութեան գոլով ոչ կարողանան վճարել. նաև

ի կողմանց կողմանց ժողովուրդս յաւելսն, վասնորոյ՝ յաջող ժամանակո՞ս պատշաճ վարկաք լայնել զսահմանո, ընդ նմին և ես հարկաւորութիւն ունէի գնալ առ պայծառափայլն վասն իւաշնատեղին, ևս և վասն մերային գերեացն՝ որ ի կողմանց իսմայէլեանցն արարին և առնեն. ևս և այլ ինչ ինչ խնդրոց և օգտից հասարակութեանց։ Իշխանքն աղաչեցին զիս գնալ ի դուռն կայսերական։ Եւ մինչ վասն ծախուցն ի տարակուսանո կայինք, ի նոյն միջոցի եհաս թուղթ ի պայծառափայլէն, թագաւորական փօշտիւ տանել զիս։ Որ մինչ գնացեալ հասի առ արթունն, գրկեցայ և սիրեցայ առ աւել քան զառաջինն։ Եւ պատշաճաւոր ժամանակս գտեալ՝ յայտնեցի զամնայնն, և ըստ կամացս գտի։ Խոկ վասն իւաշնատեղին ասաց, տակաւին յերկար ժամանակ ես մնալոց աստ, յետոյ տեսցուք։ Որ և մնամ աստ ի մեծ բանակիս, որ նստի յանդիման մեծ բանակին հագարածնի. և պաշարեալ ունէր յայնժամ զանառիկ մեծ ամրոցն Բանդար։ Եթո քանի աւուրց յայտնեցի և վասն մերայնոցն, որ ի կողմունս Բանդարու՝ և յայլ շրջակայ քաղաքս և ի յաւանս կային պաշարեալ ի մեծի վտանգի. և ի յառնիլն պատերազմաւ, նեղեալ կողոպտէին և գերեցեալ ցըրութին ի յանկիւնս Ռուսաստանու։ Որ և իսկոյն կոչեալ զամենյն զօրավարս և զգնդապետս պատուէրս ետ, և ի հեռաւորս գրեաց հրաման, արմէն անուանեալսն չկողոպտել. այլ հանգըստութեամբ ածել ի մեծ բանակն, և կոմ առաքել ի նախիցեան։ Եւ ի նոյն միջոցի առին զԲանդար հանդերձ շրջակայիւքն, յորում եղեալ ազգն մեր ածին աստ, և առաքեցի ի նախի՞ւնան։ Եւ ի գերեաց անտի զոմանս յետս դարձուցի որպէս փախուցեալ ի մէնջ, որոց և պատուիրեցի երթոլ և ծանուցանել անդ մերայնոցն, զի եթէ և նոցա պատահեցի հանդիպիլ շէկաց, յայտնեսցեն զինքեանս արմէն անուամբ, զի ծանուցեալ՝ ի սոցանէ անլինաս մնասցեն։ Ի նոյն միջոցի փախուցին և զմեծ սէրէսկէրն, և յայս կոյս Դանոր գետոյն տիրեցին ընդ գերմանացւոյն։ Ի վերայ ծովու և ի ցամաքի յանթողք են։ Որպէս ի վերայ թուրքաց, նոյնպէս և ի վերայ շուէթացն։

Թուրքն բազում արձաթ է պահանջեալ ի հայոց, ի հոռոմեց, և ի հրէից, գրեթէ զեկեզեցիսն կոստանդինուպօլսոյ մերկացուցեալ են ի զարդուց՝ և սուղ զգեցուցեալ ազգին մեր։ Զայս

գնաց ի ձեռաց՝ և կսկիծ եթող մեղ, այլ Աստուած ինայելով ի մեզ՝ և ի սուրբ տեղիսն զայնոսիկ՝ փրկեսցէ յայսպիսի վտանգից. ուր կտն ամբարեալ մթերս գանձուց, և յամենայն ժամու ի վտանգի կան։ Մեծն Պօլիս և ի սովու յոյժ տառապի, վերին այցելութեանն կարօտի։

Մեր ողորմելի մելիքքն փախուցեալ ի Շուշու խանէն, մելիք Աբովն՝ ի Գանջայ նստի քանի մի տամբ, իսկ մելիք Մէջլումն՝ որպէս պանդուխտ ոք ի Թիֆլիզ դեգերի։ Վիլքն՝ հարուածեալք են ի Լոզքեաց, և ի մէջ մեծի չքաւորութեան կան։ Ի Բագրատունոյն եկեալ դեսպան՝ մերազնեայ պայծառ իշխան Սուլիխան տաենադ պիրն, աստ՝ առ պայծառափայլն գոլով զքեզ սիրով ողջունէ. սորա ոռնիկն պղինձ տան։ Նոյնպէս և ազնիւ պարոն Սուեփանն տէր Սհակեան Դաւթեանց աստ գոլով գեռ ես, զքեզ ողջունէ. և սմա՝ ոռնիկն կապար տան։

Վասն ձմեռն լինելոյ, պայծառափայլն երթայ ի յնաշ՝ և զիս տանի։ Հրաման առեալ՝ պատրաստիմ գնալ առ մեծ կայսրն Ալամանաց, վասն անցեալ ամաց բանիցն։ Աւաղ տգիտութեան, զի յայնժամ զիրատն իմ ընկալան, և դեռ այժմ անկատար կայ։ Ի պայծառափայլէն՝ և ի դեսպանէն գերմանացւոյ յանձնարարական թուղթ եմ առեալ և մերձ աւուրս գընալոց եմ, տացէ՝ տէր՝ գտանել զինդրելիս իմ։ Զամենայն ծախս իմ՝ թէ աստ, և թէ ի գնալս առ կայսրն, պայծառափայլն հոգոյ։

Զերքն, ամենեքեան առողջ են, միամիտ մնասցես։ Բայց՝ փութացիր որդեակ օգնութիւն հասուցանել, ոի ահա պարտք տպարանին դիզանայ, և թղթոյ քարխանէն ես ի վերայ յաւելի։ Վանքն, և շրջակայ խցերն ոււարտեցաւ, բայց՝ դեռ չեմ օնեալ։ Դու մինչ գործդ աւարտիցես, ի վերայ Բրիտանու կամ Հօլանդիու և կամ Լիոնուու եկեացես։ Իսկ եթէ հաշտութիւն իցէ պահեալ ի մէջ սոցա և նեռին, Պօլսեցւոյ հարկաւոր բարակ ճոթեղէն առնուլ տացես տեղդ, և առաքեսցես ի Կոստանդինուպոլիս առ մահտեսի պարոն Դալստեան Թօմայ Զուղայեցին։ Եւ կամ ընդ քեզ բերցես ի վերայ Բաօրայու, և յանձնեացես նմա, որ նա վաճառեսցէ, լինի թէ Աստուած ողորմութիւն արարեալ։ մին արդիւնք յաւելցի, և տպարանի պարտքըն և թղթոյ գործարանի շինութեան ծախս անտի գտցուք։

և պարտուց ներքոյ յմնասցուք։ Տես որդեակ զի յայլ ուստեքէ  
այլ մին օգնութիւն գտանելոյ ակնկալութիւն չունիսկ։  
միայն այդ յԱստուծոյ օրհնեցեալքն են, և ի դոցանէ՝  
միայն դպրատանց ծախն եմ խնդրուծ, և զայս երկուքս ևս  
յաւելաւ ի վերայ, վասնորոյ և երկ չիմ թէ՝ մի՛ գուցէ պար-  
տուց ներքոյ մնասցուք։ Յիրաւի որդեակ, եթէ զայս՝ քեզ  
ծ նրսւթիւն չհամարես, և Աստուծոյ յաջողմամբն՝ կատարու-  
մըն տացես խնդրանացս, այս երեք գլխաւոր շինուածքն քոյ  
աշխատանքն և գոյին արդեամբն աւարտ կառնու, և յիշա-  
տակ կմնայ գոցա՝ և քեզ։ Եւ եթէ այնուհետեւ մեռանիլ պա-  
տահացի ինձ՝ ոչ ես ինչ հոգամ։ Բայց՝ այնպէս արասցես որ  
ջուքամ՝ չը պատահեցի։ Տեղս պարոն եսային ասէ՝ թէ կրակա-  
պաշտ հարուստ մարդիկ կան տեղն, հակն ի գլուխ մին իքմին  
են առնում և վնասն վճարումեն, հաստատ եթէ այդպէս սո-  
վորութիւն կայ տեղդ, բարեկամաց գիտութեամբ արա։

Եւ զայս քանի տողս ևս գրեմ որդեակ իմ, այլ յուսամ որ  
ը տրամեսցիս, ես զարմանամ խոհեմութենէ քոյ որ այդպէս  
շուտով մնուացար զպատուէրն իմ։ և ՃԻ. գործն թողեալ՝ Կ.  
Գործն առեր քեզ յենարան, զոր ոչ ետու քեզ իրը գործի, այլ  
որպէս թէ օրինակ քո նախնթացի ունեցելոյն, զի եթէ ոք՝ նա-  
խանձու պատճառս ինչ արկցէ առ ի խափանել ժամանակ ինչ  
զգործդ, այնու հաստատեսցես զգայթագդեալն։

Ուրեմն, որպէս ես կարծեմ, ի յետ կոյս առանձին թղթոյ  
քտնի առղ բան գրելոյս վշտացեալ ես, վասն այն զայն թողեալ՝  
և զայդ առեր ի ձեռդ։ Զոր՝ ես պարզ մտօք, առ ի միամտու-  
թիւն տեսողացն և առ ի տուաւել արդիւնաւորութիւն գոր-  
ծոյդ գրեցի, և ոչ թէ առ ինչ երկբայութեան զքէն։ Արդ՝ զու  
ի յայդ կարծիս անկանելովդ, ահա ասեմ քեզ մեծապէս մե-  
ղսնչես։ Վասնորոյ՝ բարւոք առնես եթէ զղջասցիս։ և փոխա-  
րէնն՝ աշխատեսցիս աղօթիւք և գործովք, զի մի գուցէ թէ  
քո այդպիսի ակամայ և սրտաբեկ ընթացիւքդ, կաթն ան-  
րաւական եղանիցի նազօրեցի մանկանցն, և յայնմանէ հար-  
կադրեալ՝ հատցուք զոմանս ի կաթանէ մարդն։ Զոր՝ տէր մի ա-  
րասցէ ինձ տեսանել։ զի եթէ ի յեօթանց մանկանց անտի մի-  
ոյն ի սովու մեռանիլ պատահիցի, գիտասցես զի քաղցր է ինձ  
մեռանիլն յայնժամ, քան թէ կեալ։ Եւ դու ես, ըստ ազ

գասիրութեանդ կրելոց ես յայնժամ զմեծ տրոմութիւնս, թէ և այժմ նեղացեալ փոքր երեւի քեզ: Վասնորոյ թողում այժմ իրանի մոռաց քոյ:

Սրբազն Եփեմ վարդապետ եղբօրն իմ՝ յինէն ողջոյն մատուցես: Քանիցս առ նա յանձնարարտկան թուղթ եմ գրած վասն քոյ, յուսամ որ քեզ մեծ ձեռնտու և օգնական լինի եղած առաջի իշխանացն: Քանզի՝ դա լաւ գիտէ ըզսէրն իմ առ սուրբ Աթոռն՝ և զղայրէթն իմ վառն ազգին. որ է բոլորովին պայծառութիւն սրբոյ Աթոռոյն և ազատութեան ճանապարհ ընդհանուր ազգին մեր:

Տեղւոյդ ամենայն քահանայիցն, իշխանացն, և ամենայն ժողովրդեանն ի դիմաց իմոց ողջոյն և օրհնութիւն մատուցես: Ի պարապութիւն գտանելս իւրաքանչիւրոցն՝ զորոց անուանս յայտնեալ էիր գրելոց եմ՝ յատուկ թուղթս: Նոյնե զմիւս հարկաւորն մատուցանելոյ՝ թուղթս յատուկ, զորս ի պատրաստի ունել և տեսանել և ապա մատուցանել, զի պստմեսցի ըստ արժանայն, յորմէ և օրհնութիւնս ժառանգեսցեն: Նոյն պարոնաց անուանսն որ գրեալ էիր, նոցա յիմն կողմանէ ընդհանրական կամ զայլ գիրք՝ ըստ տեղւոյն, մատուցե՞ս իրրե զօրհնութիւն, մինչեւ զայլ նոր ինչ տպեցից և մատուցից: Ահա Աստուծով պատրաստութիւն տեսանեմ՝ ռուսոտաց Պետրոս թագաւորի պատմութիւնն տպելոյ, որոյ ընթերցողքն կարծեմ թէ ոչ յագեսցին բնաւ և բազում իմաստութիւնս, և հնարս, և համել խօսակցութիւնս ուսան իցին անտի: Ընդնմին տպելոց եմ և զպատմութիւնն Կոստանտինու պօլսոյ, և զմակեդոնացւոյն: Այլ մակեդոնացւոյնն առաքեցի ի սուրբ յԱթոռն, առաքել անտի ի մեծն Պօլիս առ հանճարեղ Գէորգն՝ ըստ գրելոյն քոյ, զի մինչի վերագառնալն քոյ ի Յունաց հեղինակէ ուղղեսցէ և զպական լցուցէ, և ի գալդ, զնա՝ և զգիրքն առեալ բերցես, և ապա տպեսցուք: Յորոց զերկուսն կարդալով՝ գոնէ ազգն մեր զարթիցեն ի սէր իմաստութեան և միաբանութեան, և միւսովն շարժիցին ի նախանձ, և օրինակ առեալ զթուրքսն, արիասցին ի յուսմունս և ի փրկութիւն ազգին, և ծանիցին՝ զի սակաւ առ սակաւ աւճումն և յառաջանալն մարդոյ ի յիմոստս ինչ, յետոյ ի ծայրագոյնն հանէ. որպէս և օսմանցիքն՝ ելին ի վեր, և բարձրացան

ի մեծ կայսերական գահն և իգագաթն ամենայն թագաւորութեանց, և զանիմաստս գերեցին ի ծառայութիւն իւրեանց: Ո՞չ որդեակ իմ, թէ և աշխատիմ, այլ՝ այսր ամենայնի, և կամ այլոցն՝ զրոս խորհեալ եմ և խորհիմ, ի գլուխ գալն կախեալ կայ ի տէրամբ յաջող գառնալն քոյ: Ուրեմն, ի զուր մաշիմ և տագնապիմ, բայց զի՞նչ արարից, զի ոչ հանդարտի սիրտ իմ: յԱստուած՝ և ի սիրելի ազգն իմ յուսալով զայսպիսիս մտածելով անցուցանեմ զկեանս, մինչեւ տեսցուք թէ Բ՞նչ յաջողի:

Բժշկարան երեք հատոր գիրքն, նանա իմաստասիրինն, պիտոյիշն, զայս մեծագին գանձքն՝ շնորհակալ եմ որ գտեալ էիր և այնպիսի կարծր տեղից հանել, բայց՝ աղքատ ժամանակիօ գինն տալն նեղութիւն կրեցի, որ և սոցա գին բ. ո. ղուռուցըն տուի. միամիտ լինիս:

Այլ վեցօրէիցն, և արարչութեան մեկնիչն գրեցին թէ չէ. լուր չեմ առած: Պատճառ պատերազմն, թղթոյ կարօտ եմ մնացել:

Գրեալ էիր թէ՝ Լաթինացւոց և մեր լեզու բառգիրք ես գտեալ շատ գովեի. և ասես ի Լիոնայ է. տես որդեակ, ինի թէ ձեռք բերցես, որ լեզու ուսանելու գիրք տպենք քանի լեզուի, որ մեր ազգն այլ և այլ լեզու և գիր ուսանելով լինի թէ աչք բանայ, և մեր հիմնարկութեան վերայ շինուածք կազմէ բնակութեան: Պարտիզանի գիրքը լսեցի և չտեսի: Այդպիսի հարկաւոր գրեանք հետևեաց գտանել:

Ի գալն քոյ, Տիւրիկոյ առաքելոց վանքումն՝ հայոց թագաւորաց դատաստանագիրք կայ առէիր. հետեխս ձեռք բերել: Ես ևս, աստ ամենողը ման կայսերուհւոյ դատաստանագիրքն, որ գովելի է քան զամենայն ազգաց, թարգմանել տամ որ տըպեցից, թերեւս ազգն մեր ուսանիցին զքալցրութիւն և տեղեկութիւն օրինացն եւրոպականաց, և այնպէս կրթեսցեն զանձնու իւրեանց՝ և կամ զստորագրեալս իւրեանց՝ հեղութեամք և մի բարբարոսաբար կալ այսպէս, որպէս այժմ կամք. առաւել մեք եկեղեցականքս:

Նաև, որդեակ եթէ կարելի իցէ մի այնպիսի գրագիր բերցից ընդ քեզ, որ հայոց թագաւորաց գիւանագիրն գիտիցէ և մանկանցն մեր ուսուցէ:

Նաև, սիրաքայ մեկնիչն որ ի Յակոբայ պատրիարքէն է, զայն ևս եթէ մինչի երկու հարիւր դուռուշը գրեսցեն, գրել տացե՛ս և տպեսցուք, զի և այն՝ շատ օգուտ գործէ ազգին մերս:

Եւս հետեւեաց, թերեւս ձո՞ն Բարսղի մեկնութեան կէսն կարողանաս գոտանել, զի ընդ Մատթէոսի աւետարանի մեկնութեան որ ի Շնորհալոյն և զՄարկոսինն ևս տպեսցուք:

Զունէի ես ժամանակ այսքան երկարել զգրիչս, այլ մինչ հարկըն ստիպեաց, նեղեալ զիս գրեցի, զի գու մխիթարեալ՝ յառաջին սէրն քոյ արիացիս: Եւ ես՝ մնամ վասն սիրելի որդւոյդ իմ միշտ ....

### 1790 Յունվար 4

ի մեծ բանակին: Այս առաքեմ ի Բրիոտան....

Սահման. Այս նամակն որ գտանուեցաւ Ա. Աթոռոյս դիւանում, գործ է Դեր. Յովսէփ Արքեպիսկոպոսի Արշութեանց, Ռուսաստանի Հայոց առաջնորդի, Եկատերինէ Բ. կայսերուհու ժամանակ և Հիմնադրին նոր նախիչեան քաղաքի Դօն գետի մօտ: Գրած է հայր Ստեփան աւագ քահանային, որին ուղարկել էր նոր Զուղայ և Հնդկաստան հանդանակութեան, նոր հիմնած հայ գաղթականութեան՝ նոր նախիչեանի համար: Նամակի բովանդակութիւնն այնքան պարզ է, որ անկարօտ է բացատրութեան: Անտարակցու է, որ Հնդկահայոց արած բազմաթիւ կտակների մի մասը հետեւանք է վերոյիշեալ աւագ քահանայի ազդեցութեան:

## Մ Ի Լ Տ Ո Ն

ԵՒ ՆՈՐԱ

ԿՈԴՐՈՒՍ ՊՐԱԽՈՏԻ.

( Հայ Տէնէ )

( Ճ-Ք-Ա-Ն-Ի-Ռ-Ի-Ն )

Նա ինձ հաւատացնում էր, ասում է Դրայդէնը, թէ իրա օրինակը միշտ եղել է Սպէնսէրը: Եւ իրաւ, բարոյական մաքրութեամբ, բարձրաստիճան վսեմութեամբ, հարուստ և կարգաբան ոճով, ասպետական ազնիւ զգացնումներով և ընակր գասական բարեհներութեամբ՝ այդ երկուսը պէտք է եղբայր կոչուին: Բայց նա ունէր ուրիշ վարժապետներ ևս—Բոմնն, Ֆլէտ-